

ՄԻԶԱԶԳՎՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԴԻԱՆԱ ԳԱՌՅԱՆ

*ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների
ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու*

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Ժողովրդագրական հիմնախնդիրը տարբեր երկրներում տարբեր կերպ է արտահայտվում: Զարգացող երկրներում ժողովրդագրական հիմնախնդիրը դրսևորվում է որպես բնակչության կտրուկ աճ, որն արգելակում է տվյալ երկրի տնտեսության զարգացումը, զարգացած երկրներում՝ բնակչության անցում պարզ վերարտադրության, իսկ անցումային տնտեսությամբ երկրներում հանդես է գալիս որպես դեպոպուլյացիա՝ ծնելիության համեմատությամբ մահացության և բնակչության միգրացիայի մեծացման հետևանքով:


Մարդկության ողջ պատմության ընթացքում բնակչության աճի տեմպերի մակարդակն ավելի բարձր չի եղել, քան 20-րդ դարի երկրորդ կեսին էր: Միջին տարեկան աճը 1950-ական թթ. կազմել է 53,3 մլն մարդ, 1970-ական թթ.՝ 70,3 մլն, իսկ 1990-ական թթ.՝ 97 մլն-ից ավելի: Բացարձակ ցուցանիշներով բնակչության աճի տարեկան տեմպը 21-րդ դարի առաջին տասնամյակում նվազել է, սակայն պատմական առումով շարունակում է մնալ բարձր. միջինը 79 մլն մարդ՝ մեկ տարվա ընթացքում: Փորձագիտական գնահատականների համաձայն՝ աճի տեմպերը 2010-2025 թթ. կշարունակեն մնալ բարձր՝ տարեկան 66 մլն մարդ¹:

Սակայն աճի տեմպերի դանդաղումը չի մեղմացնում ժողովրդագրական հիմնախնդրի սրությունը: Աշխարհի բնակչության աճի ավելի քան 80%-ը բաժին է ընկնում զարգացող երկրներին, հատկապես Աֆրիկային, Միջին և Մերձավոր Արևելքի երկրներին: Սրա գլխավոր պատճառն այն է, որ զարգա-

¹ Տե՛ս *Мировая экономика /под ред. доктора экономических наук, профессора Булатова А./*. М., 2003, էջ 402:

ցող երկրներում գերակշռում է վերարտադրության այն ձևը, երբ մահացության կրճատումը չի զուգակցվում ծնելիության մակարդակի համապատասխան նվազմամբ: Ջարգացող երկրներում վերջին տասնամյակներում մահացությունը կրճատվեց 24,4%-ից մինչև 9%-ով: Նվազման նման տեմպերը համաշխարհային պատմության մեջ աննախադեպ երևույթ էին՝ պայմանավորված համաճարակների դեմ ակտիվ պայքարով, նոր բժշկական միջոցների օգտագործմամբ և սանիտարահիգիենիկ պայմանների բարելավմամբ: Ինչ վերաբերում է ծնելիության մակարդակին, ապա երրորդ աշխարհի երկրներում դրա ցուցանիշը բավականին բարձր է:

Սկսած 1970-ական թթ.՝ ժողովրդագրական ճգնաժամ առաջացավ զարգացած և անցումային տնտեսությամբ երկրներում, որը շարունակվում է մինչ այժմ: Եթե զարգացած երկրներում նշված ճգնաժամը պայմանավորված էր բնակչության աճի տեմպերի կտրուկ կրճատմամբ, բնակչության ծերացմամբ, ապա անցումային տնտեսություններում, բացի նշվածից, կարևորագույն խնդիրներից է նաև բնակչության միգրացիան: Ժողովրդագրական ծերացումը հասարակությանը սոցիալ-տնտեսական լուրջ խնդիրներ է առաջադրում. ամենից առաջ մեծացնում է զբաղված բնակչության տնտեսական ծանրաբեռնվածությունը: Կարևոր նշանակություն ունի 15-ից 64 տարեկան և 65 ու բարձր տարիք ունեցող մարդկանց թվերի հարաբերությունը (գծապատկեր 1): Այս ցուցանիշն արտահայտում է յուրաքանչյուր թոշակառուին բաժին ընկնող աշխատողների թիվը:




Գծապատկեր 1. Բնակչության կյանքի միջին տևողությունն ըստ երկրների խմբերի 1950-2010 թթ.²

Ըստ գծապատկերի՝ ակնկալվող կյանքի տևողությունն աճել է բոլոր խմբերի երկրներում: Ջարգացած երկրներում, որտեղ 1950-1955 թթ. արդեն այս ցուցանիշը եղել է 66 տարեկանը, 2005-2010 թթ. այն ավելացել է 11 տարով՝ կազմելով 77 տարի: Թույլ զարգացած երկրներում, որտեղ կյանքի տևողությունը դեռևս համեմատաբար կարճ է, այդ ցուցանիշն աճել է 20 տարով՝ 36-ից մինչև 56 տարեկան: Ջարգացող երկրներում կյանքի միջին տևողությունն ավելացել է ավելի կտրուկ՝ 26 տարով՝ 42-ից մինչև 68 տարե-

² Мировые демографические тенденции, Доклад Генерального секретаря ООН, E/CN.9/2011/6, с. 7.

կան: Փաստորեն, զարգացող և զարգացած երկրներում կյանքի տևողությունների միջև խզումը զգալիորեն կրճատվել է: Կանխատեսվում է, որ հետագայում այդ ցուցանիշը կշարունակի աճել բոլոր խմբերի երկրներում:

Ինչ վերաբերում է ծնելիության փոփոխություններին, որոնք արձանագրվել են 1950 թ. սկսած, ապա դրանք ևս շատ մեծ են: Դեռ երբեք մարդկության պատմության ընթացքում ծնելիության մակարդակն այսքան կտրուկ և այսքան ցածր չի իջել: Այս ցուցանիշը նվազել է՝ հիմնականում պայմանավորված միլիոնավոր մարդկանց՝ ընտանիքի անդամների թվաքանակը սահմանափակելու ցանկությամբ: Սակայն ծնելիության մակարդակը դեռևս զգալիորեն տատանվում է՝ կախված երկրի տնտեսական զարգացման մակարդակից: Այս պահին նկատելի տարբերություն կա թույլ զարգացող երկրների (4.4 երեխա մեկ կնոջ հաշվով) և զարգացող երկրների (2.5 երեխա մեկ կնոջ հաշվով) միջև: Բացի այդ, ծնելիության միջին մակարդակը, որ 1975-1980 թթ. զարգացած երկրներում այնքան ցածր էր, որ չէր ապահովում բնակչության վերարտադրությունը (1.6 երեխա մեկ կնոջ հաշվով), շարունակում է մնալ ցածր մակարդակի վրա, չնայած գրանցված որոշակի առաջընթացին (գծապատկեր 2):



Գծապատկեր 2. Ծնելիության մակարդակն ըստ երկրների խմբերի 1950-2010 թթ.³

Հատկապես զարգացած երկրներում ծնելիության նման ցածր մակարդակի պայմաններում բնակչության աճի միակ աղբյուրը կարող է ներգաղթը լինել: Անհրաժեշտ է իջեցնել նաև բնակչության մահացության մակարդակը հատկապես փոքր և միջին տարիքի բնակչության շրջանում, որն էլ իր հերթին մի քանի անգամ կդանդաղեցնի ծերացումը:

Մասնագետների հաշվարկներով 2000-2050 թթ. մարդկության թիվն աճելու է 1.5 անգամ, ընդ որում՝ Աֆրիկայում բնակչությունը կաճի 2.3 անգամ, իսկ Եվրոպայում կնվազի 12%-ով: 2050 թ. մարդկության 59%-ը բնակվելու է Ասիայում, 20%-ը՝ Աֆրիկայում և 7%-ը՝ Եվրոպայում: Բնակչության աճի անհամաչափությունը բնորոշ է նաև առանձին երկրների: Բերենք մի քանի օրինակ. եթե 2010 թ. ԵՄ բոլոր երկրների բնակչությունը 1 տարում աճել է 343 հազ. մարդով, ապա Հնդկաստանը նույնքան աճ է արձանագրել ընդամենը 6 օրում, 50 տարի առաջ Ռուսաստանի բնակչությունը 3 անգամ ավելի էր, քան Պակիստանինը, այսօր այդ երկրների բնակչությունը հավասար է, իսկ 50

³ Նույն տեղում:


տարի հետո Ռուսաստանի բնակչությունը 2.5 անգամ ավելի պակաս կլինի, քան Պակիստանինը: Ուշադրության արժանի է նաև այն հանգամանքը, որ, չնայած երկրագնդի՝ ՉԻԱՀ-ով տառապող բնակչության 70%-ը կենտրոնացած է Աֆրիկայում, դա չի նվազեցնում աֆրիկյան երկրների բնակչության արագ աճը:

Ինչ վերաբերում է ՀՀ-ին, ապա, անցումային այլ երկրների նման, այստեղ ժողովրդագրական իրավիճակն անհանգստացնող է հիմնականում երեք առումով՝

- ցածր ծնելիություն,
- ծերացում,
- արտագաղթ:

Քննարկենք այս խնդիրներից յուրաքանչյուրն առանձին: Այսպես՝ ծնելիության ցուցանիշը, ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության, մեկ կնոջ հաշվով կազմում է 1.5 երեխա, այն դեպքում, երբ բնակչության պարզ վերարտադրության ապահովման համար անհրաժեշտ է 2.1 երեխա: Այդուհանդերձ, թեև 2011 թ., 2010 թ. համեմատությամբ, արձանագրվել է ծնելիության նվազում 3.3%-ով, սակայն, 2006 թ. համեմատությամբ, 2011 թ. այդ ցուցանիշն աճել է 15%-ով:

Ըստ ՄԱԿ-ի ժողովրդագրական ծերացման սանդղակի՝ եթե 65 և բարձր տարիքի բնակչության տեսակարար կշիռը բնակչության ընդհանուր թվաքանակում 7%-ից բարձր է, ապա այդպիսի բնակչությունը ծերացած է համարվում: ՀՀ-ում այդ ցուցանիշը կազմում է 11.1%: Բնակչության բնական աճի տվյալներն ավելի խոսուն են լինում, երբ դրանք համադրվում են մահացության ցուցանիշների հետ (գծապատկեր 3):



Գծապատկեր 3. ՀՀ բնակչության բնական շարժը բնութագրող ցուցանիշներ (մարդ)⁴

Գծապատկերից պարզ երևում է, որ 2009 և 2010 թվականներին նկատվում է բնակչության բնական որոշակի աճ մյուս տարիների համեմատությամբ: Սակայն անհրաժեշտ է նշել, որ ծնելիության մակարդակի բարձրացումը և մահացության նվազումը չեն հանգեցրել ՀՀ բնակչության հավելաճի բարելավմանն այն պարզ պատճառով, որ այդ տարիներին աճել է նաև արտագաղթը:

⁴ Գծապատկերը կազմել է հեղինակը 2012 թ. Հայաստանի ժողովրդագրական ժողովածուի տվյալների հիման վրա, Եր., ԱԿԾ-2012, էջ 68, 89:

Միգրացիան, որպես ժողովրդագրական երևույթ, գոյություն ունի գրեթե բոլոր երկրներում: Այսօր ևս աշխարհում այդ գործընթացն անխուսափելի է, քանի որ, եթե կան պետություններ, պետական սահմաններ, կլինեն նաև մարդկանց տեղաշարժեր: Աշխարհի շատ ժողովուրդների նման հայերը նույնպես ունեն միգրացիայի հին ավանդույթներ: Հայաստանի պատմությունը լի է զանգվածային միգրացիայի օրինակներով. բացառություն չէր նաև 20-րդ դարը, որը սկսվեց և ավարտվեց լայնածավալ միգրացիոն գործընթացներով⁵:

«Հ-ից աշխատուժի միգրացիայի պատճառները տարբեր են: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ միգրացիոն գործընթացներում առաջնային է տնտեսական դրդապատճառներով բնակչության արտահոսքը: Արտագաղթողների 2/3-ը որպես հիմնական պատճառ նշում է աշխատանքի առնչվող հանգամանքները՝ աշխատատեղերի բացակայությունը կամ սղությունը, աշխատանքի վարձատրության ցածր մակարդակը և ինքնուրույն տնտեսական գործունեությամբ զբաղվելու բարդությունները: Սակայն աշխատուժի միգրացիայի շարժառիթ կարող են լինել նաև երկրների առանձին տնտեսական շրջանների զարգացման մակարդակների տարբերությունները: Սկզբնական շրջանում դա արտահայտվում է ներքին միգրացիայով՝ դեպի խոշոր և զարգացած արդյունաբերական կենտրոններ, իսկ այնուհետև, զբաղվածության հիմնախնդրի սրման պատճառով, ձևավորվում են աշխատուժի միջազգային միգրացիոն հոսքեր⁶: Այս գործընթացը ցայտուն դրսևորվել է ՀՀ-ում: Գյուղական բնակչության կենտրոնացումը խոշոր քաղաքներում անդառնալի տնտեսական կորուստների պատճառ է դառնում այն երկրներում, որոնք ունեն համեմատական առավելությունների իրացման հնարավորություններ գյուղատնտեսության ոլորտում: Այս առումով ակնառու օրինակ է ՀՀ-ում հետխորհրդային ժամանակաշրջանում ստեղծված իրավիճակը, երբ մեր երկրի առջև ծառայող ինչպես արտաքին, այնպես էլ ներքին միգրացիայի հետևանքները հաղթահարելու դժվարություններ: Ներքին միգրացիան հանգեցրեց գյուղական շրջանների բնակչության կենտրոնացմանը մայրաքաղաքում: Աշխատատեղերի բացակայությունը և աշխատանք գտնելու նրանց անհաջող փորձերը ավելի խթանեցին արտաքին միգրացիան (աղյուսակ 1):

Ինչպես տեսնում ենք, ՀՀ միգրացիոն հաշվեկշիռը դիտարկվող ժամանակահատվածում գրեթե մշտապես ունեցել է բացասական արժեք: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ միգրացիոն մնացորդը 2004-2006 թթ. դրական էր, սակայն, 2007 թ. սկսած, միգրացիան աճում է աննախադեպ տեմպերով՝ 2011 թ. փոքր-ինչ գերազանցելով երկրում ծնվածների բացարձակ ցուցանիշը: Եթե աղյուսակի տվյալները համադրենք գծապատկեր 3-ի տվյալների հետ, ապա կարող ենք մոտավոր պատկերացում կազմել, թե ինչպիսին է վիճակը հանրապետությունում բնակչության տարեկան հավելաձի առումով: Այսպես՝ 2006-2011 թթ. այդ ցուցանիշը մշտապես ունեցել է դրական հաշվեկշիռ: Ծնվածների և մահացածների տարբերությունը կազմել է միջինում 14500 մարդ: Սակայն միգրացիայի հետևանքով բնակչության բնական հավելաձը ընդունել է բացասական արժեք (բացառությամբ 2006 թ.): Մասնա-

⁵ Տե՛ս **Վ. Խոջաբեկյան**, Հայաստանի բնակչության վերարտադրությունը 19-20-րդ դարերում և 21-րդ դարի շեմին, Եր., 2001, էջ 132:

⁶ Տե՛ս **Զ. Թադևոսյան**, Կապիտալի և աշխատուժի միջազգային միգրացիա, Եր., 2005, էջ 72:

վորապես՝ 2011 թ. միգրացիայի և մահացության հետևանքով ՀՀ բնակչու-
թյունը պակասել է մոտ 29000 մարդով:

Աղյուսակ 1

**«Վիճազգային ուղևորափոխադրումներն ըստ փոխադրամիջոցների
2001-2012 թթ.⁷»**

(հազ. մարդ)

Տարե- թիվ	Ընդհա- նուր	Այդ թվում՝ տրանսպորտի տեսակներ		
		օդային	երկաթուղային	ավտոմոբիլային
	մնացորդ	մնացորդ	մնացորդ	մնացորդ
2001	-61	-23	-19	-18
2002	-2	-4	-6	7
2003	-11	-23	-1	15
2004	2	-11	-1	13
2005	13	- 8	- 0.9	21
2006	22	1.5	-0. 4	21
2007	-3	-14	-0.5	11
2008	-23	-28	-1.6	6.9
2009	-25	-24	-1.9	1.5
2010	-29	-22	-2.0	-5.8
2011	-44	-23	-6	-15
2012	-43	-8.9	-1.3	-33

Այսպիսով՝ ՀՀ միգրացիոն գործընթացները վերջին տարիներին հասել են
այնպիսի չափերի, որ սկսել են ազդել երկրի սոցիալ-տնտեսական զարգաց-
ման, բարոյահոգեբանական մթնոլորտի, սոցիալական կայունության պահ-
պանման և ժողովրդագրական իրավիճակի վրա: Նկատելի դրական տեղա-
շարժերին զուգընթաց, ՀՀ միգրացիոն իրավիճակը շարունակում է մնալ
բարդ՝ վտանգելով երկրի թե՛ սոցիալ-տնտեսական, թե՛ աշխարհաքաղա-
քական կայուն զարգացման ընթացքը, պահանջելով միգրացիոն հիմնա-
խնդիրների նկատմամբ պետության ուշադրությունը: Արտաքին միգրացիայի
բացասական մնացորդի միջին մեծությունը գերազանցում է բնակչության
բնական աճի ցուցանիշները, ինչը դառնում է երկրի բնակչության բացարձակ
թվաքանակի կրճատման գործոն: Արտերկրում օրինական աշխատանքի
հնարավորությունների սահմանափակությունը, տեղեկատվության պակասը
նպաստում են այնպիսի անցանկալի երևույթների զարգացմանը, ինչպիսիք
են անօրինական միգրացիան և թրաֆիկինգը:

⁷ Աղյուսակը կազմվել է ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն
պետական ծառայության պաշտոնական կայքի տվյալների հիման վրա՝ <http://www.smsmta.am/>

ДИАНА ГАЛОЯН

Доцент кафедры „Международных экономических отношений“ АГЭУ,
кандидат экономических наук

Демографическая проблема мировой экономики и Республика Армения.- Демографическая проблема в разных странах проявляется по-разному: в развивающихся странах демографическая проблема проявляется как быстрый рост населения, что препятствует экономическому развитию, в развитых странах – как простое воспроизводство населения, а в странах с переходной экономикой - в качестве депопуляции населения.

Демографическая ситуация РА вызывает тревогу с точки зрения следующих проблем:

1. низкий уровень рождаемости: коэффициент рождаемости, на одну женщину, в РА составляет 1,5 ребенка, в то время как для обеспечения простого воспроизводство населения необходимо 2,1 детей.

2. старение: в РА доля населения в возрасте 65 лет и выше составляет 11,1%. Если данный коэффициент выше 7%-ов, то такое население считается стареющим.

3. эмиграция: миграционное сальдо РА начиная с 1991г. почти всегда имело отрицательное значение.

Итак, ежегодный прирост населения РА всегда имел положительное сальдо, тем не менее, из за эмиграции прирост принимает отрицательное значение, что представляет угрозу как с точки зрения демографии, так и с точки зрения социально-экономического развития нашей страны.

DIANA GALOYAN

Associate Professor at the Chair of „International Economic Relations“ at ASUE, PHD in Economics

Demographic Problem of the World Economy and the Republic of Armenia.- The demographic problem takes different forms in different countries: in the developing world the demographic problem appears as rapid population growth, which hinders economic development, in developed countries – it is a simple reproduction of the population, and in countries with transition economies - as depopulation.


The demographic situation in Armenia is alarming from the standpoint of the following problems:

1. low birth rates: birth rate coefficient per woman in the RA is 1.5 children, while for the simple reproduction of the population it has to be 2.1 children.

2. aging: in the RA the population aged 65 years and above composes 11.1% of the total population. If this ratio is above 7%, such population is considered to be aging.

3. emigration: net migration in the RA since 1991 has almost always had a negative value.

Thus, the annual population growth of the RA has always had a surplus, however, because of the increase in emigration it takes a negative value, which is a threat both for the demographic situation, and for the socio-economic development of our country.



ԱՆՈՒՇ ԱՆԱՆՅԱՆ

*ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների
ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու*

ՆԵՐՂՐՈՒՄԱՅԻՆ

ԳՈՐԾՆԹԱՑՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ

ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Տնտեսական ցանկացած համակարգ ենթադրում է ներդրումային շարունակական գործունեություն ինչպես լրացուցիչ ռեսուրսների ներգրավման, այնպես էլ առկա հնարավորությունների առավել արդյունավետ օգտագործման եղանակներով: Ներդրումների գործնական իրացումը տեղի է ունենում ներդրումային գործընթացի միջոցով, որը ներառում է այնպիսի տարրեր, ինչպիսիք են՝ ներդրող, ազատ ֆինանսական ռեսուրսներ, ներդրման օբյեկտ և այլն: Դրանք փոխկապված են այն աստիճան, որ մեկի բացակայությունը խախտում է ամբողջ գործընթացի համակարգվածությունը: Ներդրումային գործընթացների անընդհատության խախտման հիմնական պատճառներից մեկն էլ տնտեսական տատանումներն են, որոնք դրսևորվում են արտադրանքի թողարկման և մատուցվող ծառայությունների աճով ու կրճատմամբ, գնաձի տեմպերի վայրիվերումներով, գործազրկության մակարդակի դրական ու բացասական փոփոխություններով:

2007-2009 թթ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը համաշխարհային տնտեսության ամենախոր անկումներից մեկն էր, որն ազդեց աշխարհի գրեթե բոլոր երկրների տնտեսությունների վրա: Հակված ենք պնդելու, որ վերջինիս ազդեցությունը և ներթափանցման արագությունը իրականում թերագնահատվում էին ողջ աշխարհում: Այդուհանդերձ, հետճգնաժամային զարգացման գլխավոր խնդիրներից է դառնում ներդրումային գործընթացների կարգավորումը: Սա առաջին հերթին ենթադրում է ներդրումային հոսքերի ակտիվացում՝ ստեղծելով բարենպաստ պայմաններ ինչպես ներդրումների ներքին աղբյուրների, այնպես էլ օտարերկրյա ներդրումների ներգրավման համար: Մյուս կողմից՝ ցանկացած համակարգային ճգնաժամ ընձեռում է երկրի տնտեսության կառուցվածքային հիմքի բարելավման հնարավորություններ: Այն վեր է հանում տնտեսության գործող կառուցվածքի հիմնական թերություններն ու համաշխարհային տնտեսության զարգացման ժամանակակից միտումների հետ անհամապատասխանության աղերսները:

Ելնելով վերոնշյալից՝ կարծում ենք, որ հետձգնաժամային զարգացման պայմաններում ներդրումային գործընթացների կարգավորման հիմնախնդիրն առավել քան կարևորվում է՝ նպատակ ունենալով ինչպես խթանելու տնտեսական աճը, այնպես էլ կառուցվածքային փոփոխությունների միջոցով ստեղծելու առավել մրցունակ տնտեսություն:

Թեև վերը նշվածն ընդհանրական մոտեցում է, որն արդիական է եղել նաև այլ ձգնաժամների պայմաններում, այդուհանդերձ, 2007-2009 թթ. ֆինանսատնտեսական ճգնաժամի յուրահատկություններն առավել քան ընդգծում են այս մոտեցման առաջնայնությունը: Գլխավոր պատճառներից մեկն այն է, որ դա կրում է կառուցվածքային, նորարարական բնույթ¹: Այսինքն՝ տնտեսության զարգացման գրավականը ներկայումս առավելապես ֆինանսական նորամուծություններն են՝ որպես ֆինանսական շուկայի նոր գործիքներ, որոնք, ըստ էության, ապագայում երաշխիքներ կստեղծեն տնտեսական կայուն աճի ապահովման համար: Ֆինանսական նորամուծությունները կերպափոխում են տնտեսական հարաբերությունների համակարգի լայն շրջանակ՝ վերաբերելով թե՛ տնտեսության իրական, թե՛ ֆինանսական հատվածներին: Եթե նախկինում նավթի համաշխարհային գինը որոշվում էր առաջարկի և պահանջարկի հարաբերակցության հիման վրա, ինչպես նաև OPEC-ի թելադրանքով, ապա այսօր դրա վրա նշանակալի է նաև երկրորդային ֆինանսական շուկաների ազդեցությունը և հատկապես ֆինանսական փաստաթղթերի առջ ու վաճառքի պայմանները: Մեկ այլ առանձնահատկություն է զարգացող երկրներից դեպի զարգացած երկրներ կապիտալի զանգվածային արտահոսքը: Դրա պատճառն այն է, որ անշարժ գույքի գների անկման և իրական գնին մոտենալու պարագայում վարկառուները կանգնեցին դժվարությունների առջև, որը փոխանցվեց վարկատուներին, իսկ բոլոր մակարդակների ներդրողները, ունենալով իրացվելիության խնդիր, շտապեցին ցածր գներով վաճառել իրենց ակտիվները, բաժնետոմսերն ու պարտատոմսերը, որոնց վաճառքի գները զարգացող երկրներում, ի տարբերություն զարգացած երկրների, ավելի ցածր էին:

Որպես տնտեսական ճգնաժամին բնորոշ և 2007-2009 թթ. ֆինանսատնտեսական ճգնաժամի յուրահատկություններով ակտիվացած երևույթ՝ զարգացող երկրներում նշանակալիորեն նվազեցին ներդրումները: Հատկապես հետխորհրդային երկրներում, որտեղ կայուն տնտեսական աճի ապահովման համար անհրաժեշտ է պահպանել օտարերկրյա ներդրումային հոսքերի անընդհատությունը, նկատվեց ֆինանսական միջոցների խիստ պակաս, ինչն ուղեկցվեց տնտեսական խոր անկմամբ: Մասնավորապես, համաշխարհային տնտեսական ճգնաժամի բացասական ազդեցությունները տնտեսության իրական հատվածում սկսել են դրսևորվել 2008 թ. չորրորդ եռամսյակից և շարունակել են խորանալ 2009 թ. ընթացքում: Հայաստանի խոցելիությունը պայմանավորված է եղել արտաքին գործոններից տնտեսության մեծ կախվածությամբ, բազմազանեցման ցածր մակարդակով և համախառն ազգային տնօրինվող եկամտում գործոնային եկամուտների, մասնավոր տրանսֆերտների բարձր տեսակարար կշռով: Ճգնաժամը Հայաստանի տնտեսություն է ներթափանցել հիմնականում երեք խոցելի օղակներ-

¹ Ст'ю Российская экономика в 2008 году. Тенденции и перспективы (Выпуск 30). М., ИЭПП, էջ 10: Финансовый кризис в России и в мире /под ред. Гайдара Е./ М., „Прспект“, 2009, էջ 165: **Аганбекян А.**, Кризис беда и шанс для России. М., АСТ, „Астрель“, 2009, էջ 59:

րով՝ օտարերկրյա կապիտալի ներհոսքի, մասնավոր տրանսֆերտների կրճատման և մետաղների գների նվազման բացասական ազդեցությամբ:

Հայաստանում ֆինանսատնտեսական ճգնաժամի առաջացման գլխավոր պատճառներից մեկը արտասահմանից ստացվող տրանսֆերտների ծավալների կտրուկ կրճատումն է: Սա առանձնահատուկ պատճառ է, որը բնորոշ է սփյուռք ունեցող Հայաստանին: Մասնավոր տրանսֆերտների հետ միասին նշենք նաև օտարերկրյա ուղղակի ներդրումների մասին: Երկուսն էլ արտարժույթի ներհոսքի հիմնական աղբյուր են²:

Բավական է նշել, որ եթե 2008 թ. առաջին եռամսյակում ստացվող տրանսֆերտների ծավալը կազմել է 365,3 մլն դոլար, ապա 2009 թ. նույն ժամանակաշրջանում՝ 261,8 մլն դոլար, այսինքն՝ նվազել է 28,4 տոկոսով³:

Ինչ վերաբերում է օտարերկրյա ներդրումներին, ապա 2009 թ. ընթացքում դրանք (ներառյալ պետական կառավարման և բանկային համակարգով ստացվածը) չեն նվազել. այսպես՝ 2009 թ. հունվար-դեկտեմբերին կազմել են 2470,8 մլն ԱՄՆ դոլար՝ 2008 թ. համեմատությամբ աճելով 27,9%-ով⁴: Սակայն իրավիճակը սկզբունքորեն այլ է 2010 թ.: Ըստ պաշտոնական տվյալների՝ 2010 թ. ներդրումային հոսքերը կազմել են 1505.7 մլն ԱՄՆ դոլար, որը 2009 թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ նվազել է 41.1%-ով, ընդ որում, ուղղակի ներդրումների ներհոսքը կազմել է 693.4 մլն դոլար (նվազել է 23.5%-ով), այլ ներդրումներինը՝ 811.9 մլն դոլար (նվազել է շուրջ 2 անգամ), պորտֆելային ներդրումներինը՝ 0.4 մլն դոլար (նվազել է 96.4%-ով)⁵:

Թեև 2011 թ. թվականին, 2010 թ. համեմատությամբ, նկատվել է ներդրումային հոսքերի աճ 6.3%-ով, այդուհանդերձ, դրանք դեռևս չեն հասել 2009 թ. մակարդակին. 1654.0 մլն ԱՄՆ դոլար 2011 թ.՝ 2009-ի 2470.8 մլն ԱՄՆ դոլարի դիմաց⁶:

Սակայն իրավիճակն այլ է տնտեսության իրական հատվածում կատարված ներդրումների դինամիկայի առումով: Այսպես՝ ըստ պաշտոնական տվյալների՝ 2009 թ. տնտեսության իրական հատվածում ներդրումների հոսքերի ծավալը /առանց պետական կառավարման և բանկային համակարգով ստացածի/ կազմել է 935.5 մլն ԱՄՆ դոլար՝ 2008 թ. համեմատությամբ նվազելով 25.6%-ով: Այս միտումը շարունակվել է նաև 2010 և 2011 թթ. ընթացքում: Մասնավորապես, 2010 թ. հունվար-դեկտեմբերին << տնտեսության իրական հատվածում օտարերկրյա ներդրումների հոսքերի ծավալը (առանց պետական կառավարման և բանկային համակարգով ստացվածի) կազմել է 702.7 մլն դոլար, որը 2009 թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ նվազել է 24.9%-ով, իսկ 2011 թ. հունվար-դեկտեմբերին 816.3 մլն դոլար, որը 2010 թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ աճել է 16.2%-ով, սակայն դեռևս չի գերազանցում նախաձգնաժամային մակարդակը: Նշենք նաև, որ օտարերկրյա ընդհանուր ներդրումների ծավալը 2011 թ. հունվար-

² Տե՛ս **Նիկոլե Օմես** (ԱՄՀ-ից), «Բանբեր ՀՊՏՀ», 2008 (2), էջ 10:

³ Տե՛ս «<< Կենտրոնական բանկի բանբեր», 2009, I եռամսյակ, էջ 37:

⁴ Հետազոտությունները կատարվել են << ԱԿԾ տվյալների հիման վրա. www.armstat.am

⁵ Հետազոտությունները կատարվել են << ԱԿԾ տվյալների հիման վրա. www.armstat.am

⁶ Տե՛ս http://www.armstat.am/file/article/sv_02_12a_420.pdf

դեկտեմբերին 2010 թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ աճել է 16.2%-ով⁷:

Ներկայացված վիճակագրական տվյալները վկայում են, որ ՀՀ-ում էական բարեփոխումներ պետք է կատարվեն հատկապես ներդրումային քաղաքականության բարելավման համատեքստում: Ներկայիս տնտեսական զարգացման պայմաններում, երբ յուրաքանչյուր երկրի ազգային տնտեսության մրցունակության բարձրացման հիմնական խթաններից է միջազգային կապիտալի հոսքերին ակտիվ մասնակցությունը, անհրաժեշտ է ներդրումային քաղաքականությանն առանձնակի ճկունություն հաղորդել: Այսպիսի մոտեցումը հնարավորություն կտա նշանակալիորեն բարձրացնելու ներդրումային գրավչության մակարդակը՝ պայմաններ ստեղծելով օտարերկրյա կապիտալի ներհոսքի համար: Ճկունության ապահովումը երկակի նշանակություն ունի: Մի կողմից՝ այն պետք է խթանի ներդրումային հոսքերը, իսկ մյուս կողմից՝ զսպի դրանք, եթե կա ազգային տնտեսության անվտանգության խաթարման կամ ներդրումների չափից ավելի մեծ ծավալների ներգրավման վտանգ:

Ըստ էության, տնտեսական զարգացման արդի պայմանները պահանջում են ներդրումային հոսքերի համաչափության ապահովմանը նպատակաուղղված քաղաքականություն: Սա պահանջում է ներդրումային գործընթացների վրա էական ազդեցություն ունեցող գործոնների կանոնակարգում և ուղղորդում ցանկալի նշագծով: Նկատի ունենալով, որ օտարերկրյա ներդրումային գործընթացների վրա ժամանակակից պայմաններում ազդում է ոչ թե մեկ գործոն, այլ գործոնների բազմություն, ուրեմն կապիտալի արտահանման շարժառիթը մեկը չէ: Նախ՝ արտադրությունն աստիճանաբար ձեռք է բերում ավելի ընդգրկուն բնույթ, երկրորդ՝ օտարերկրյա ներդրումային գործընթացներն առավել մեծ չափով են համապատասխանում արտադրողական ուժերի վերազգային բնույթին, երրորդ՝ ավելցուկային կապիտալն էլ ավելի միջազգային բնույթ է ստանում:

Այս հանգամանքները կարևոր դեր են խաղում համաշխարհային տնտեսության միասնացման գործընթացներում, խթանում են արտադրողական ուժերի զարգացման անդրազգային բաղադրիչների լայն կիրառումը տեխնոլոգիաների փոխանցման, աշխատանքի միջազգային բաժանման առավելությունների օգտագործման շնորհիվ: Եթե միջազգային միասնացումը քննարկենք դրա նյութաառարկայական բովանդակության տեսանկյունից, ապա կարող ենք ասել, որ օտարերկրյա ներդրումները էականորեն օժանդակում են այդ բովանդակության ոչ միայն ձևավորմանը, այլև հարստացմանը:

Փաստորեն, ժամանակակից համակարգային փոփոխությունները պահանջում են ակտիվորեն ինտեգրվել միջազգային տնտեսական գործընթացներին: Առանց միջազգային համագործակցության և օտարերկրյա մրցունակ կազմակերպությունների կողմից իրականացվող ներդրումների ու առաջավոր տեխնոլոգիաների կիրառման հնարավոր չէ ձևավորել մրցունակ տնտեսություն: Վերջինս բնակչության կենսամակարդակի բարձրացման և կայուն տնտեսական աճի ապահովման հիմք է:

Այս համատեքստում առանձնակի կարևորություն են ստանում օտարերկրյա ներդրումները, որոնք նպաստում են միջազգային փորձի ներթափանցմանը ընդունող երկիր: Սակայն ներկայումս ոչ պակաս կարևոր խնդիր

⁷ Տե՛ս http://www.armstat.am/file/article/sv_02_12a_420.pdf

է նաև ներդրումային հոսքերի ուղղորդման համապատասխանեցումը տնտեսության օպտիմալ կառուցվածքային հիմքի ձևավորման պահանջներին: Այսինքն՝ օտարերկրյա ներդրումների դերի վերլուծության ժամանակ անհրաժեշտ է նկատի ունենալ, թե ինչ նպատակի պետք է ծառայեն դրանք: Կարծում ենք՝ այդ իմաստով հարկ է ուշադրություն դարձնել վերջին տարիներին էական տնտեսական զարգացում արձանագրած երկրների փորձին: Այստեղ օտարերկրյա ներդրումներն օգտագործվել են հիմնականում որպես նորագույն տեխնոլոգիաներ ներմուծելու գործիք: Պայմանականորեն կարճ ժամանակահատվածում դրանցից շատերը կարողացան արագացնել զարգացման տեմպերը և 20-րդ դարի վերջերին արդեն ունեին գիտատար արտադրության ճյուղերի բավական լայն ցանց:

Միաժամանակ կարևոր է նշել, որ տեխնոլոգիաների ժամանակակից միջազգային փոխանցման գործարքներում լիցենզիաների ու պատենտների առևտրի ճնշող մասը միջնորդավորվում է արտասահմանյան ներդրումների այս կամ այն ձևով: Դրանք կարող են լինել պայմանագրեր և համաձայնագրեր:

Ընդունող երկրներում օտարերկրյա ներդրումների հիմնական նպատակը արտադրության ընդլայնմանը նպաստելն է, տնտեսության իրական հատվածի կառուցվածքային և մի շարք այլ որակական ու քանակական ցուցանիշների փոփոխությունը: Դրանք, անշուշտ, կունենան իրենց հետևանքները << արտահանման ու ներմուծման կառուցվածքի բարեփոխման, երկրի ֆինանսական կայունության ապահովման, տնտեսական անվտանգության բարձրացման և այլ բնագավառների վրա, ուստի հետճգնաժամային զարգացման հիմնական խնդիրներից ենք համարում ներդրումային միջավայրի բարեփոխումը: Սա ենթադրում է ակտիվ միջոցառումների իրականացում թե՛ ներքին աղբյուրների ակտիվացման, թե՛ օտարերկրյա ներդրումների խթանման համար:

<< ներդրումային գրավչության ապահովման համար առաջնահերթ են հետևյալ պայմանները.

- քաղաքական կայունություն և իշխանության թևերի հավասարակշռություն,
- քաղաքական և տնտեսական ազատականություն (ցածր հարկադրույքներ, ներդրումները խթանող մեխանիզմներ, բարենպաստ պայմաններ),
- իրավական համակարգի կայունություն,
- տնտեսության իրական հատվածի ենթակառուցվածքի զարգացում (ավտոմայրուղիներ, երկաթուղի, օդանավակայաններ),
- կոռուպցիայի դեմ պայքարի հստակ և արդյունավետ ռազմավարություն:

Տնտեսական զարգացման համար կարևոր նշանակություն ունի նաև ներդրումների ներքին աղբյուրների ակտիվացումը: Այդ նպատակով նախևառաջ անհրաժեշտ է զարգացնել տնտեսության ֆինանսական հատվածը: Պետք է նկատել, որ իրավիճակը լավագույններից չէ Հայաստանի կապիտալի շուկայում, որը, որպես խնայողությունները ներդրումների վերափոխող ինստիտուցիոնալ կառույց և բաժնետիրական ընկերությունների գործունեությունը վերահսկող արդյունավետ գործիք, գործարար միջավայրի կողմից ըստ արժանվույն գնահատված չէ: Հայաստանի կապիտալի շուկայի համար

բնութագրական են ցածր իրացվելիությունը և շրջանառելիությունը, գործարքների մեկանգամյա բնույթը, որոնք հիմնականում ուղղված են խոշոր բաժնետերերի փաթեթների խոշորացմանը:

Մեր կարծիքով՝ ՀՀ-ում արժեթղթերի երկրորդային շուկայի զարգացումը խթան կհանդիսանա տոկոսադրույքների մրցակցային մեխանիզմների ձևավորման, ներդրողների շրջանակի ընդլայնման, դրանով իսկ՝ արդյունավետ գնագոյացման համար:

Պետական քաղաքականությունը պետք է նպաստի արժեթղթերի տարբեր տեսակների թողարկմանը, ներդրումների ներգրավման արդյունավետ և հուսալի համակարգի ստեղծմանը, ներդրողների շահերի պաշտպանությանը, միջազգային արժեթղթերի շուկային միասնացմանը և այլն:

Ներդրումային միջավայրի բարելավման նպատակով Կառավարությունը պետք է ջանքեր գործադրի տնտեսության կառուցվածքը բազմազանեցնելու համար: Արտահանման բարձր ցուցանիշների հասնելու և դրանք պահպանելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ հարկ է բացահայտել և զարգացնել գիտահետազոտական քլաստերները, ապահովել կրթական ծառայությունների առևտրայնացումը արտահանմանն ուղղված ներդրումների, մասնավորապես՝ ԱԱԿ-ների ներգրավման միջոցով:

Կարծում ենք՝ այս միջոցառումների իրականացումը հնարավորություն կտա էականորեն բարելավելու ներդրումային միջավայրը՝ նպաստավոր պայմաններ ստեղծելով ներդրումային ակտիվության մակարդակի բարձրացման համար:

АНУШ АНАНЯН

Доцент кафедры „Международных экономических отношений“ АГЭУ, кандидат экономических наук

Актуальные проблемы урегулирования инвестиционных процессов в РА.- Данная статья посвящена обсуждению основных ориентиров инвестиционных процессов в посткризисной стадии развития. Принимая во внимание тот факт, что мировой финансовый кризис подорвал мировую экономику как единую систему с ее структурной основой и составляющими элементами, в настоящем необходимо пересмотреть вопросы урегулирования инвестиционных процессов в контексте развития мировой экономики с соблюдением нормативных требований новых тенденций.

ANUSH ANANYAN

Associate Professor at the Chair of „International Economic Relations“ at ASUE, PHD in Economics

Current Challenges of Regulating Investment Processes in the RA.- The present paper is devoted to the consideration of the basic determinants of investment regulation in the postcrisis development stage. Taking into account that the global financial crisis has undermined the world economy as an aggregate system, as well as the structural basis of its components, it is vital to reconsider the regulation of investment processes in the context of compliance with the current trends of the development of the world economy.

